


# ՏԻՏԱՆ



ԳՈՒՐԳԵՆ  
ՀԱՅԿՈՒՆԻ

891.99  
2-26

մր.

ՏԻՏԱՆ



662-42

(100/  
6200)



ԳՈՒՐԳԵՆ  
ՀԱՅԿՈՒՆԻ

2016

# ՏԻՏՈՆ

ԴԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Արտասպառվիճան իբառնը լին ա-  
պահում է նեղինակին,

~~37661~~ ա.հ.

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Գնա՞ իմ Պօէմ,  
 Ման եկ ամեն տեղ,  
 Մտիր ամեն տուն, ամեն մի պնկիւն,  
 Ուր էլ որ լինի,  
 Ով էլ որ լինի  
 Ու տես ամենցին.

Ով որ իր հաւառ ըրտինքն է թափում,  
 Ով որ իր սղօրու ըրտինքն է լափում:

Գնա՞ իմ Պօէմ,  
 Գտիր ամենցին:

Հնչի՛ր Դու նրանց հալա՞րտ, յաղթական.  
 Հնչիր Դու ազատ...

Կերտել իմ ես Քեզ—  
 Քարսըի ծնունդ  
 իմ ըմբուս Հոգու, իմ փայլուն Մտրի,  
 իմ հզօր Կամքի  
 Անմա՞ Յաղանդով:

ԴԱԿ-60

Հնչի՞ր իմ Պօէմ։

Կերտել եմ իս Քեզ—

Դարձեթ ծունդ

Իմ յաւէտ անջննչ, կարմրատառ քլտնող

Անման Գրշիս

Սուրբ Աշխատանքով։

Հնչի՞ր իմ Պօէմ։—

Ծնաել ես Դու իմ սուր ու շիւանից։

Ծնաել ես Դու իմ հասուն արգանդից։

Ծնաել ես եւ Դու անառակ կեանից—

Դարձերով կերտած

Հսկա Քաղաքում։

Հնա՞ իմ Պօէմ։

Ման եկ ամեն տեղ,

Մտիր ամեն տուն, ամեն մի անկիւն,

Խոշ էլ որ լինի,

Ուր էլ որ լինի,

Ով էլ որ լինի։—

Հնա՞ Դու անվախ, հպարտ, յաղթական,  
Հնա Դու ազա՞տ։

Դտիր ամեն ըին,

Հնչի՞ր ամեն ըին։—

Բոլոր սէրերից իմ սէրն է սիրուն,

Բոլոր սէրերից իմ սէրն է հսկա,

Եյս երգն է անման։

Հնա՞ իմ Պօէմ,

Անհա՞ն իմ Պօէմ։

Դիւթական Քաղաք.

Երբ աշտարակից նայում եմ չորս կողմ  
Անթարթ հայեաց ցով,

Հեռու եւ անծայր տարածութեան մէջ,  
Իմ ուղընթի՛ տակ,

Ու տեսնում եմ ես—

Պուրակ ու այգի, պարտէզների մէջ,  
Դէս անհուն ծզւող, հորիզոններում,  
Արարածների, հազիւ նշմարտող,  
Ջո նուկը զծերը մշուշների մէջ—

Զգում եմ այնժամ,

Որ թոյլ, մարդկային աշքերով չափել  
Օր աւուր ածող, լայնասփիւր, անեզը  
Ջո մեծութիւնը,

Վիթխարի Քաղաք,  
Անզօր եմ, անզօր:

Վիթխարի Քաղաք.

Եւբ տեսնում եմ ևս

Մարմար ու զբանիտ հակա սիւներով  
Պալատ—արքունիք, դղեակ ու ամրոց  
Փայլի մէջ կորած.

«Սըրութեան տաճար»—եկեղեցիներ  
Աշու գմբէթներով, գռող ու փրուն,  
Ուկու եւ ուժի խնկարկումներով.

«Գեղեցկութեան ըեւ՛—թատրօնները՝ մե՛ծ,  
Պալատների ցոփ, տոփալից սիրոյ

Եւ աշխարհակալ նւածումների

Դրատումներով.

Բրօնզէ կոթողներ եւ յուշարձաններ  
Թռնակալների յաւերժցման համար.

Օթէլներ ու ցիրլէ եռուն կրքերի  
Եւ անասնական ըմբշամարտի վայր.

Համալսարան՝ պալատներին կից,  
Երկրային կեանքի, տիեզերական  
Գիտութեանն անհաս.

Մատենադարան՝ ցեցի կերակուր  
Փոշոտ գրքերով.

Մուգէնեւը սին.

Կամուրջները յա՛ղիթ.

Եւ կայարաններ, պօստ-հեռագրատուն,  
Աշխարհը պատող լաթիվինթ ցանցով.  
Բանտիեր մոայլ.

Բերդերը դաժան, աշտարակներով,  
Խոժո՞ն, յաղթանդամ,  
Ժայռերի նման հըկենք են ցցւած.—

Օ ես սարսափով,

Օս չնչին պիզմէյ, հեռու եմ փախչում:

Եւ զգում եմ ևս,

Որ զարեր կանցնին

Ու օրեր կը գա՞ն,

Երբ Դու անելի հպարտ ու լպիրը  
Պէտք է ծառանաս երկնքի դիմաց.

Եւ քո ապազա աճուլի ուժը,

Ալթիսարի Քաղաք,

Այսօր իմ տկար ուղեղով սրգել

Անզօր եմ, անզօր:

Վիթխարի Քաղաք.  
Երբ անցնում եմ ևս  
Ծաղկուն, ծառաշատ  
Քանաշազարդ լայն փողոցներով,  
Ու տեսնում եմ ևս—  
Աէրոպլաններ—օդում սաւառնող,  
Բիւր վէլօսիաէտ, կառք, մատօցիկէտ,  
Աւտօմօրիլներ, էլէկտրաքարշեր.  
Եւ շրջեկառներ,  
Հելիներ շնչով,  
Մըկաթուղիով առաջ սլացող.

Երբ լսում եմ ևս—  
Խաժամուժ կանչեր, ճիշեր ու սուլոց,  
Գոռոսմ ու գոշոմ, անդուլ աղաղակ,  
Որոտից էլ խենթ դեւական համերգ  
Թնդում է ուժգին.

Զգում եմ այնժամ,  
Խաժամուժ Քաղաք,  
Որ թոյլ գրիշի տկար խօսքերով  
Երգել զու ժխորն՝ տարերքին մըցող,  
Անզօր եմ, անզօր:

Դիմական Քաղաք.  
Երբ տեսնում եմ ևս—  
Շուկա եւ կրակ ու վաճառատուն  
Գանձերի մենեան—աղօթատներ  
Հսկա շահերի լոյսով նեղեղւած.  
«Ազատ առեւտուր»—  
Աւան ու թալան.  
Խարդախւած մթներք, գողութիւն ու սուտ,  
Անդադար երդում՝  
«Ասուած է վկայ»...  
  
Եւ տեսնում եմ ևս—  
Գրականները հաստ վաճառականներ,  
Ամն կիրակի,  
Երկիւղած, պարկեցտ,  
Մոներ են վառում սրբերի առաջ,  
Աշամքոյր տալիս Քրիստոսի ծառա  
Տէրտէր, վարդապետ, հաղսկոպոսին  
Եւ սրբազնագրյն կաթողիկոսին,  
Որ աղօթքներում,  
Ուկու նչչմնով,  
Սրանք «շերմառանդ  
Գթութիւն հայցեն Ահեղ Արարշի,  
Քատութիւն մեղաց» շարշի-քազազին...

Երբ տեսնում եմ ես—

Թեթեւ վաստակի, կախարդիչ ուկու  
Տենչերով հարբած,  
Բիրժա են վազում պարագիտ, մակէքը  
Դիմահար, անքուն,  
Փնտրող հայեացքով, խորամանկու նենզ.  
Բիրժայում անտես շարժում, եռ ու զեռ,  
Գարբնական ուժով ամող ակցիաներ...  
Դամավիժօրէն ընկնում են յանկարծ...  
Հրմանք ու սարսափ իրար յաջորդում  
Այստեղ հրմանքից, այնտեղ սարսափից  
Խելազար խմբնը.  
Օրէնքին համոյ թալանի մըցում  
Զէնիթին հասած.  
Սոուն աժիօտա՛ծ...

Երբ տեսնո՞մ եմ ես—

Ամեն արդ ու զաքը,  
Ուկին ու արձաթ, պլատին ու գոհար,  
Մարգարիտ, զմրուտ, թանկագին ակներ  
Գանձերը բոլոր,  
Ամեն կողմերից  
Ուկու կոատուն՝  
Բանկերդ են հոսում.

Համայն նիւթեղէն, հոգեղէն կեանքի  
Հանգոյցը կնժոռոտ  
Հզօր բանկերիդ սուր միքաննեթում.

Եւ տեսնում եմ ես—

Գոռող արքաներ, իշխան, նախարար  
Բանկերիդ լակէյ.

Մարզւած, զինավառ, ահեղ բանակներ  
Ամեն ժամ պատրաստ  
Բանկերիդ կամքով  
Վազելու դէպի արնաներկ կոիւ.

Եւ զոյ բանկերիդ նաևը նսկա  
Հողու են հեռո՞ւ,  
Աշխարհի բոլոր ովկեանոններում.  
Դաւը ու ինտիգ, լկտի արշաւանք  
Դէպի գաղութներ.  
Արին-պատճապն, աւեր ու սարսափ  
Բանկերիդ ծնունդ.  
Բանկերի վնուկ.  
Բանկերի վամպիր.  
Բանկերի են իշխու աշխարհիս վրա.

Զգում եմ այնժամ,  
Դու վնուկ, վամպիր,  
Թալանչի Թաղա՛ք,  
Որ իմ դողոջուն տկար բազուկով,  
Ես հէզ վերաբուժ,  
Բանալ մի առ մի ու քուժել այսօր  
Այլանդակ մարմնիդ, այլանդակ հոգուդ  
Վէրբերը ժանրու,  
Անգօր հիմ, անգօր:

Այլանդակ Թաղա՛ք,

Օսկու կուսուն.

Երբ տեսնում են ես—

Օմիք ու տներքօք-ահաքեկումներ.

Եւ սրբագրուած օրէնքի առաջ

Անլուր կողուպուտ.

Ուժը իրաւունք.

Բանտ, շղթա, աքսոր, արին-կախաղան  
Թոյլերի համար.

Դատարանը լոկ անամօթ կեղծիք.

Խրիսպուղնցիան՝ կենեքիան արևատ.

Խրաւագէտներն մի մի խրտիւակ,  
Յաւրունան սովհատ,

Բութ, արծաթաէո եւ պնակալէզ,  
Վերին խաւըրի գործիքները մութ...

Եւ տեսնում եմ ես—

«Ինտելիգենցիան»...

Խժիննը, սթիշէ, զիտուն պրօֆէսոր—  
Անձար ու անգէտ.

Շողորոք գրչ տիմար քննադատ,

Անտաղանդ հոգու անյոյս բանաստաղծ.

Ջնող վերասան, ու անյոյզ երգիշ—

Բոլորն հացկուուն.

Եւ դեղին մամեդ ու այս առա թագավորութիւնը

2404-60

7/3 1922

Ա. Ա. Խաչատրունի



Երբ տեսնում եմ ես,  
Անախօթ Քաղաք,  
Շուք, փայլու պժրանք, չո կեանքը շայտ.  
Անվարչ թղթախաղ.  
Քէֆեր ու խրախմանք.  
Պարահանդէսներ,  
Զեղիս ու անտուկ.  
Էլէկտրականութեան լրյուղ հեղեղած  
Գարեջրատներ, կաֆէ-քէստորան.  
Մայրից-ծայր լցուն այցելուներով.  
Շամպայն ու լիկօր հոտում են առատ  
Աղբիրի նման,  
Արքում են անյագ  
Ուկու, արծաթի երկրակուներ—

Ճաղատ գլուխներ, քթամիտ դէմքեն,  
Սիֆիլիտիկներ,  
Սափրած, լպատուն,  
Ջրտինք են հոտում,  
Ճարպուտ աչքերում  
Դիմական ժպիտ,  
Անասնական կիրք, տոփանք է եռում.

Կանայք զարդարուն  
Եւ անուշաճուտ իւղերով օծած,  
Ունք, երես, շրթունք գոյներով ներկած.  
Կուրծքերն հոլանի, թեմերը արծակ,  
Կոկէտ ու կրքոտ  
Դիւթում են ցինիկ.  
Ու կանչում են հեզ... աչքով եւ ունքով.  
Ու կանչում են ինձ...  
Ու կանչում են ծեզ...

Եւ անցնում եմ ես  
Բանուկ փողոցի ասֆայլտ մայթերով,  
Ուր պոռնիկ կանայք,  
Վաճառքի ելած,  
Արծակ համարծակ կանչում են խոպուտ...  
Դէսի մօտակա անշուր համարներ—  
Ճաղատ ապրուստի կանիսիկ վժարով,  
Իրենք անզգա,  
Ցագուրդ տալու ինձ...  
Ցագուրդ տալու ծեզ...

Օ՛, զգում եմ իս  
 Ու տեսնում եմ իս,  
 Մվ դու անառակ, շողշողուն քաղաք,  
 Թէ ի՞նչ դիմական ուժեր կան որ մէջ:  
 Ինչքա՞ն առաս թոյն  
 Կաթիւ ու կաթիւ,  
 Ամեն-աման օր  
 Լեցնում ես դու իմ երակների մէջ:  
 Իմ նոգին առողջ, իմ միտքը պայծառ,  
 Իմ կամքը երկաթ—  
 Մշուշն է պատում,  
 Մշուշը փառի, փայլքի, տոփանքի,  
 Հեշտասէր կեանքի.  
 Ու ես անշմար,  
 Թոյնովդ արբած,  
 Թաղտամ եմ քիչքիչ լո նուզը ոստայնի  
 Թալուտ ցանցերում...  
 Ու թում է ինձ,  
 Որ ինդյում եմ իս,  
 Որ էլ ինձ համար շկա մաքուր օղ.  
 Որ թոյւ բազուկով, ես չնչին էակ,  
 Փշիւ ցանցերէ դիմական, հզօր,  
 Անառակ քաղաք,  
 Անզօ՞ր եմ, անզօ՞ր:

Դիմական քաղաք.  
 Երբ տեսնում ես—  
 Ջո շքեղ կրծքից,  
 Անշուր, բայց խրոխտ գուծարանների  
 Աշտարակածն ծխաճաններով  
 Ամպերի նման,  
 Քուլա ու քուլա երկինք բարձրացող  
 Ծուլի ու գուլրշին,  
 Կայծերի խործեր,  
 Թանձր շնրտերով մակատդ են կնճոռմ.  
 Ու այնպէս անվախ  
 Անձերի, կնդու ու մուր  
 Թքում են վերից փառահեղ դէմքիո.  
 Եւ ցնծում եմ դու.  
 Ու ցնծո՞ւմ եմ իս.

Երբ տեսնում եմ իս—  
 Ջո իսկ արզանդում,  
 Գուծարանների կամարների տակ  
 Հսկա անիւներ պտոյտ են գալիս  
 Կատաղի թափով.

Ու նրանց թափքը շէնքերդ հզօր  
Դողոսմ են նիմքից, դողոսմ են անզօր,  
Թրթռում եմ ես...

Եւ տեսնում եմ ես—  
Դիմական ուժերդ անթիւ վրնտերով  
Մէկիկ ու մէկիկ մեխւած են այստեղ,  
Դորձարաններում,  
Միքնաներին.  
Դիմական ուժերդ կրակ են ժայթրում,  
Կրակ են ժայթրում անմար հողում,  
Դժոխք-հողում լաւա են թրում.  
Լափում են պլատին, արծաթ ու ոսկին,  
Երկաթը ազնիւ, աղինծ ու կապար.  
Չուլում են դրամ.  
Չուլում են մանան հրավառ գէնքեր  
Քո փառքի համար.—  
Թնդանօթ ու ոռումք, հրացան ու փամփուչտ  
Սկին ու սոսեր.—  
Օրոնք ոք մի օր,  
Անման մի օր,  
Պիտի որոտան, մոնշան քո դէմ...

22

Ու լսում եմ ես—  
Գործարաններից  
Հազար զարկերով, հազար ու հազար  
Լաց, ծիչ, աղաղակ, թնդին ու որոտ—  
Զարագուժ համերգ—  
Թնդումէ անյաղթ քո դէմ յանդիման...  
Անըմբնելի հոգուկ անասակ.  
Հոգուս հարազատ...

Եւ տեսնում եմ ես—  
Գործարաններում,  
Ամեն ակնթարթ,  
Ամեն շարժումով,  
Ամեն զարկի հետ  
Միլիօն կինու մարդ վառումեն նոր կեանք  
Արին-քրտին քով...

Օ սուրբ Աշխատանք,  
Ոք ամեն քարիք ծնում ես Այսօր  
Մուրծի հարածով  
Տանջանքի բովեց,

23

Ո՞ւ վսիմ վաղւան նրջանիկ օրեր,  
Մարդկութեան համար,  
Դարքնում ես այստեղ,  
Ես Քնզ եմսիբում.  
Ու պաշտո՞ւմ եմ Քհզ...

Ու տեսնում եմ ես—  
Կնդտի ու մըի, Նզովքի զաւակ  
Գործառնացի շարքերը անխոնչ,  
Որպէս կարաւան,  
Խոնաւ որչներից,  
Շարան ու շարան,  
Պատուհանիս տակ,  
Ամեն ծայգի նետ նոռում են շտապ  
Դէպի գործարան—  
Քրտինչ թափելու մինչեւ մութ գիշեր,  
Ու կանչում են ինձ  
Այնպէս մոռեիմ—  
Դէպի աշխատանք,  
Դէպի աշխատա՞նք.

Երբ լսում եմ ես—  
Արտակարգ ժամին,  
Դաւագիր նոզով ու խորհրդաւոր,  
Ծշակն է սուլում.—  
Մինոնդ Քաղաքի Դուժկանն ահաւոր,  
Ծնորդ Քաղաքի մե՞ծ Անտարեզ—  
Դուժում է անդուչ  
Գո՞ւլ, Գո՞ւլ, Գործադո՞ւլ.  
Ա, ցնցում եմ ես.

Ահա ակնթարթ...

Ու տեսնում եմ ես—  
Դաժան ամրուսի գլուխների ծո՞վ.  
Փողոց, գործարան ծուլւել են իրար.  
Զուլւում եմ ես Եմրոխի գրկում.

Անոնի միտի՞նզ.

Անհամար բանւոր.  
Կուլծցելը արձակ, աշքերը արիւն—  
Բոցեր են ժայթքում,  
Բազուկները վե՞ր,

Զայրոյթը հոգու ըլոռուցքներ կազմած。  
Ամբոխի ծնունդ հոեսողները զի՞ւ  
Կրակ են թափում հրդեն շուրթերից,  
Վառում ամբոխից,  
Վառում Ամբոխին.  
Ամբոխը եռում կաթսայի նման,  
Եռում եմ եւ ես կաթսայի շոգուց,  
Բորբոքում Կրակն ամենքի նոգում.  
Ամենքի նոգին ծուլւա՛ծ իմ հոգուն...

Ու լսում եմ ես,  
Որ թնդում է վէս  
Խնտէրնացիօնա՛լ—  
Յաղթական բայլերգ.  
Մածանում է սէգ արնազոյն պրօշ.

Հարժում են տներ, շարժում է փողոց.  
Քաղաքից հսկա Ամբոխը հիմա  
Քայլում է լմբոստ.  
Քայլում եմ եւ ես. քայլում եմ լմբոստ.  
Քայլում եմ լմբո՛ստ...

Ու տեսնում եմ ես...  
Չընադ տեսարան.  
Ոստինեցի զէմ՝  
Դէպ անեղ պայքար  
Ազգում է Ամբոխ:

Մ'ենոնդ Կապիտալ՝ վարձկան գնդերով,  
Ենման Աշխատանք՝ Կարմիր բանակով—

Ոսկի ու Ամբոխ  
Շանթում են իրար...  
Գոռում ու գոչում, որոտ ու աղմուկ,  
Լաք, ծիչ, աղաղակ,  
Շաշին ու դոփին,  
Ռազմական ժխոր, դիւական համնրգ.  
Քաղա՛քն է թնդում:

Սարերից հսկա, ալիքների պէս,  
Ոսկի ու Ամբոխ,  
Ուժգին շառաշով բաղխաւով են իրար.  
Քրտինքի մոտած, փրփուր են թքում.  
Ծնչում հելինեւ...

Եւ երկու տիտան—վիշապ, Աժդահան,  
Երկուսն էլ հիմա  
Կատաղի թափով.

Դրոհ են տալիս հակա Քաղաքում...  
Դրոհ են տալիս... Ու յիտ նահանջում...  
Նորանոր ուժով

Վժուական կուռու բաղկանելու կրկեն,  
Հզօր Քաղաքից տիրածու երկրին:

Ու իմ պարզատեն, մարզաքէ մոտքով  
Օ, տեսնո՞ւմ եմ ես,  
Որ դու անառակ, մեռնող Կապիտան,  
Գործաւոր դասի, Աշխատանքի դէմ,  
Բո թոյլ ուժերով մաքառել Այսօք  
Բիրուտ Քաղաքում—

Մնաց՝ բա, անգօր:

Ա Ե Ր Ձ Ե Ր Գ Ա Ն Հ

Թոփ'ը իմ Պօէմ,  
Աննմա՞ն Պօէմ.  
Ճախրիք ամեն տեղ,  
Ամեն մի երկրի Երկնակամարուտ.  
Լուսաշաղի հետ  
Հնչիք ամենքին.

Ով էլ որ լինի,  
Որ էլ որ լինի,  
Չայնի՛ր դու իրոխտ.

—Մանուկը ծնաւ,  
Արևամանո՞մէ,  
Երկու տիտանի  
Արիւնու կուից,  
Ըմբռատ Քաղաքի  
Տանչանքի բովում:

Թողի՛ր, իմ Պօէմ,  
 Անմա՞ն իմ Պօէմ.  
 Սաւառնակների  
 Պողպատ թնմբով  
 Ճախրիր երկնքում.  
 Հսկա սարերի զագաթներից վե՛ր  
 Տիեզերական անունութեան մէջ.  
 Կայծակի թափով  
 Սլացիր յաւէտ.  
 Անհատանելի  
 Քո բարձունքներից,  
 Որոտից էլ խենթ,  
 Զայնի՛ր դու խրոխտ.

—Սուր Աշխատանքի,  
 Աշխատատրական ըմբոստացումի  
 Յաղթական ժամին—  
 Ողջոյն Ամենքին:



0025560

2013

2001

«Ազգային գրադարան»



NL0015560

(Р. Ц.) 1503. Москва. Тир. 200 экз.  
Типограф. ДКСА, Армандский, 2.